ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 31-Ա/2 06.06.2019

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0413.05.5 «ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0413.05.01.5 «ՄԵՆԵՋԵՐ՝ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴՈՒԱԼ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թ. մարտի 22-ի N 333-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 19-րդ կետը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1320-Ա/Ք հրամանը և ՀՀ ԿԳ նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկի կողմից ներկայացված փորձագիտական դրական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 0413.05.5 «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության 0413.05.01.5 «Մենեջեր՝ հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների» որակավորմամբ փորձարարական դուալ ուսուցման համակարգի ուսումնական պլանը և մոդուլային ուսուցման ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

փորձարարական դուալ ուսուցման համակարգի ուսումնական պլանը և մոդուլային ուսուցման ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում 2018/2019 ուսումնական տարվանից փորձարարական երկակի (դուալ) ուսուցման համակարգի ներդրման մասին» թիվ 1401-Ա/2 հրամանի հավելված 1-ով հաստատված «Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Արմենուհի Ալեքսանյանին՝ միջին մասնագիտական կրթության 0413.05.5 «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության 0413.05.01.5 «Մենեջեր՝ հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների» որակավորման դուալ ուսուցումը կազմակերպել սույն հրամանի հավելվածով հաստատված ուսումնական պլանին և մոդուլային ծրագրերին համապատասխան:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Գրիշա Թամրազյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.06.2019

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378